ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Վաղարշապատի (1945 թվականից՝ Էջմիածին) եկեղեցիներից աչքի է ընկնում Ս. Աստվածածինը, կամ ինչպես տեղացիներն են կոչում «Գյուղի եկեղեցին»: Հայ ճարտարապետության գլուխգործոցներ հանդիսացող Մայր Տաճարի, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե եւ Ս. Շողակաթ վանքերի կողքին, Ս. Աստվածածին եկեղեցին թեպետ զիջում է իր տեսքով, սակայն մինչ օրս ծառայում է իբրեւ գործող եկեղեցի հավատացյալների համար: Ըստ պահպանված շինարարական արձանագրության՝ այն կառուցվել է Հայոց ՌՄԺԶ (1767) թվականին Սիմեոն Ա Երեւանցի Կաթողիկոսի (1763 - 1780 թթ.) կողմից:

Իր փասնյոթամյա հայրապետական գործունեության ընթացքում, Սիմեոն Ա Երեւանցին աչքի է ընկել ոչ միայն եկեղեցական, ազգային-հայրենասիրական, պատմագիտական ու մշակութային գործունեությամբ, այլեւ շինարարական, նորոգչական հսկայածավալ աշխատանքներով: Հաշվի առնելով, որ Մայր Աթոռը չուներ արտաքին պարիսպ եւ վանքապատկան գոմերն ու շտեմարանները շարունակ ենթարկվում էին ավազակների ասպատակություններին, Սիմեոն Ա Երեւանցու նախաձեռնությամբ կառուցվում է Մայր Աթոռի արտաքին պարիսպը՝ հաստատուն աշտարակներով եւ դիտանոցներով[1]: Այնուհետեւ նրա ջանքերով կառուցվում են սեղանատունը, մոմատներն ու դպրատները, ինչպես նաեւ Ս. Էջմիածնում հաստատվում են հայատառ առաջին տպարանը (1771 թ.), թղթի գործարանը (1776 թ.) եւ այլն:

Սիմեոն Կաթողիկոսի երկրորդ մեծ գործը լինում է Վաղարշապատ գյուղի տեղափոխությունը Մայր Տաճարից 200-250 մ դեպի հյուսիս: Մինչ 1763 թվականը Ս. Էջմիածնի վանքին կից է եղել հիշյալ գյուղը, որի խառնիխուռն տները խաթարում էին Մայր Աթոռի վեհափեսիլ գեղեցկությունը: Քանդելով տները՝ Սիմեոն Կաթողիկոսը «… ի պարսպէն, եւ նոր տուներ եւ գիւղի եկեղեցին շինեց իւրով արդեամբն»[2] Ս. Աստվածածին անունով:

Քանի դեռ Ս. Էջմիածնի վանքը գտնվում էր գյուղի մեջ, բնավ նոր եկեղեցու անհրաժեշտություն չէր առաջացել, սակայն գյուղի՝ Մայրավանքից անջատումը պահանջ է ստեղծում մի նոր եկեղեցու, որի շինությունն էլ գլուխ է բերում Սիմեոն Կաթողիկոսը[3]: Այն սկզբում փայտաշեն է եղել, իսկ «յետ դարու միոյ առ մեօք քակեալ զեկեղե-

1 Տե՛ս **Սիմեոն Կաթողիկոս Երեւանցի**, Ջամբռ, Եր., 2003, էջ 48-49:

2 **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, Բ հատոր, Ս. Էջմիածին, 2001, էջ 3525:

3 «Դիւան հայոց պատմութեան», Գիրք Գ, Սիմէոն Կաթուղիկոսի յիշատակարանը, հրատարակեց **Գիւտ քահանայ Աղանեանց**, Թիֆլիս, 1894, էջ ՁԹ:

ցին՝ շինեցին քարակերտ եւ ընդարձակագոյն եւս ի վերայ վեցից սեանց…»[4]:

Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցին պատկանում է ԺԷ-ԺԸ դարերում ավանդական դարձած վեց սյուներով եռանավ բազիլիկ տիպին: Նման տաճարները լայն տարածում են ունեցել դեռ Զ-Է դարերում, եւ շուրջ հազար տարի հետո հայ ճարտարապետները կրկին անդրադառնում են հնավանդ ձեւերին՝ ստեղծելով նորը[5]: Նոր շրջանի եռանավ բազիլիկներից մեկն էլ Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցին է:

Եկեղեցին ունի 31,79 մ երկարություն, 17,44 մ լայնություն, երեք մուտք: Գլխավոր մուտքն արեւմտյան կողմից է, մեկական մուտքեր կան նաեւ հարավային եւ հյուսիսային կողմերից: Մուտքերի դռների վերեւում, աջ եւ ձախ կողմերում, ինչպես նաեւ Ավագ խորանի կենտրոնական մասում բացված են լուսամուտներ, իսկ գլխավոր մուտքից վեր, ներքուստ, ներկառուցված են ատիճաններ, որտեղից մտնում են զանգակատան երկրորդ հարկաբաժին: Ավագ խորանին աջ եւ ձախ կողմերից կից են ավանդատները, որոնց արեւելյան կողմում եւս բացված են մեկական լուսամուտներ:

Հաշվի առնելով հրապարակի նկատմամբ եկեղեցու ցածրադիր դիրքը, ձեռնարկվում է զանգակատան շինարարությունը, որն իրականացվում է ճարտարապետ Թ. Գեւորգյանի կողմից՝ 1982 թ. կազմված նախագծով: Եկեղեցու արեւմտյան մուտքի դիմաց, նախկին թերավարտ զանգակատան չորս մույթերի տեղում, կառուցվում է եռաստիճան հորինվածքով զանգակատունը (ընդհանուր բարձրությունը՝ 22,5 մ), որը սլացիկ տեսք է հաղորդում եկեղեցուն՝ ություն կաթողիկեի սրածայր վեղարով: Զանգակատան չորս մույթերին, գետնից մոտ 1,50 մ բարձրությամբ, քանդակված են մեկական հավասարաթեւ խաչեր:

Երկար տարիներ եկեղեցին մատնվում է անուշադրության եւ հայտնվում անմխիթար վիճակում: Վազգեն Ա Ամենայն Հայոց շնորհազարդ Կաթողիկոսի ջանադրությամբ, Մայր Աթոռի բարերարներ Տեր եւ Տիկին Վահե եւ Տորիս Զընոզյանների հոգածությամբ, 1980 - ական թվականներից Ս. Աստվածածին եկեղեցում ծավալվում են նորոգման ու մաքրման աշխատանքներ: Ինչպես վերը նշեցինք, եկեղեցու արեւմտյան կողմում վերաշինվում է զանգակատունը, նորոգվում եկեղեցու սալահատակը, քանդվում ներկառուցված փայտաշեն վերնահարկը, մաքրվում պատերի ծեփն ու երեսպատվում տուֆ քարի սալիկներով, կառուցվում նոր մկրտարան, տեղադրվում նոր Ավագ Սեղան ֆելզիտ քարից եւ այլն: Եկեղեցու շուրջը կառուցվում է նոր պարիսպ՝ երկաթյա ցանկապատով, ինչպես նաեւ երիցատունն ու մատաղատունը, աղբյուր-հուշարձանը (ճարտարապետ՝ Հակոբ Բաբախանյան), որի կառուցման արձանագրությունն ունի Հայոց ՌՆԼԷ (1988) թվականը: Եկեղեցու նորոգման ու բարեզարդման այս հսկայածավալ աշխատանքների մասին Հայոց ՌՆԼԵ (1986) թվականը կրող արձանագրություն[6] է փորագրված արեւմտյան մուտքի բարավորին՝ ներքուստ:

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել եւ քննության առնել հատկապես եկեղեցու՝ մինչ օրս չուսումնասիրված վիմական արձանագրությունները:

---

4 **Ղ. Ալիշան**, Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 209: Տե՛ս նաեւ **Ն. Տէր-Մինասեան**, Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցին, Եր., 1995, էջ 28:

5 Տե՛ս «Հայկական ճարտարապետության պատմություն», հատ. երկրորդ, Եր., 2002, էջ 138:

6 Տե՛ս **Ն. Տէր-Մինասեան**, նշվ. աշխ., էջ 20:

Կարծում ենք, որ եկեղեցու շինարարական արձանագրությունը, նախապես փորագրված է եղել արևմտյան մուտքի բարավորին՝ արտաքուստ: Այս է վկայում Հայր Ալիշանի հետևյալ տեղեկությունը. «…շինեալ ի նմա առանձին եկեղեցի փայտայարկ յամի 1767, յանուն Ս. Աստուածածնի, եւ արձանագրեալ ի վերայ արեւմտեան դրան նորին»[7]: Հավանաբար, զանգակատան կառուցման ժամանակ, քարը տեղադրել են Ավագ Սեղանի աջակողմյան պատին, ուր հետևյալ արձանագրությունն է.



ՇԻՆԵՑԱՒ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ՀԵ/ՌԱՑԱՒ
ԳԵՕՂՍ ՅԱԹՈՌՈՅՆ Ի ՇԵ/ՆԻԼ ՊԱՐՍՊԻ
ՆՈՐԻՆ ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ՀՐԱ/ՄԱՆԱՒ ՏՆ
ՍԻՄԷՕՆԻ Ս⌊Ր⌋Բ⌊Ա⌋Ջ⌊Ա⌋Ն Ա⌋Թ⌊Ո⌋Ղ⌊Ի⌋-
ԿՈ⌋Ս ԻՆ/ ԵՐԵՒԱՆԵՑՒՈՑ
Ի ՊԱՏԻՒ ՍՐ-
Բ⌊ՈՒ⌋ՅԻ⌊Ո⌋Ց Ա⌈ՍՏՈՒԱ⌉ԾԱԾ/ՆԻՆ ՅՈՐՈՑ
ԱՆՈՒՆ ԻՍԿ ԿԱՌՈՒՑԱՒ Ի ՌՄԺԶ (1767)[8]

(նկ. 1)

Ս. Աստվածածին եկեղեցու ճարտարապետական հարդարանքը լրացնում են նրա որմերում արտաքուստ ագուցված գեղաքանդակ խաչքարերը: Վերջիններս յոթն են, որոնցից մեկն ագուցված է արևմտյան մուտքից վեր, իսկ մյուսներն արևմտյան, հյուսիսային և հարավային մուտքերի աջ և ձախ կողմերում:

Հանդիսանալով վանքերի և եկեղեցիների գեղարվեստական հարդարապարր՝ խաչքարերը դեռ ԺԳ դարից ագուցվում էին սրբավայրերի որմերին՝ առավել ընդգծելով տվյալ կառույցի սրբայնացումը: Լայն տարածում է ստանում նախկինում կանգնեցված (սկզբնապես եկեղեցու համար չնախատեսված) խաչքարերի ագուցումը եկեղեցական կառույցների պատերի մեջ, որը հարատևում է մինչև ուշ միջնադար[9]: Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցու որմերին ագուցված խաչքարերը թվագրվում են ԺԵ - ԺԶ դարերով: Հիշյալ խաչքարերն ունեն արձանագրություններ՝ բացառությամբ հարավային պատի զույգ խաչքարերի (նկ. 6, 7): Այս առումով Ն. Տեր-Միքայելյանն իր ուսումնասիրության մեջ նշում է, որ վեց խաչքարերից ոչ մեկի վրա արձանագրություն չկա, բացի մեկից, որը հնարավոր չի եղել ընթերցել: Նշենք, որ արձանագրությունները մեծ մասամբ ընթեռնելի են, դրանցում առկա են թվականներն ու քարգործ վարպետների անունները: Ստորև ներկայացնում ենք հիշյալ խաչքարերի վիմագրերը.

Վաղագույն թվականն ունեցող խաչքարն (1,34 մ X 0,68 մ) ագուցված է եկեղեցու արևմտյան մուտքի ձախ կողմում.

---

7 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Այրարատ, էջ 209:

8 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Անդ, էջ 209: Տե՛ս նաև «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, էջ Չթ:

9 Տե՛ս **Հ. Լ. Պետրոսյան**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, 326-328:

ԹՎ[ԻՆ] :ՋԻԱ: (1472)
ԴԱՎԻԹ ԿԱՋՄ[ՈՂ]

(նկ. 2)

Միջնադարյան Հայաստանի ճարտարապետներին ու քարգործ վարպետներին նվիրված իր ուսումնասիրության մեջ Սեդրակ Բարխուդարյանը ԺԵ դարի խաչքար կազմողների շարքում հիշատակում է նաև Դավիթ կազմողին, որի՝ Արցախի իշխան Սասնայի համար քանդակած ՋԼ (1481) թվականը կրող խաչքարը կանգնած է Փառիսոսի ավերակների մեջ[10]: Ժամանակի եւ անվան համապատասխանությունը թույլ է տալիս ենթադրել, որ վերոհիշյալ խաչքարը եւս Դավիթ կազմողի աշխատանքներից մեկն է:

Մյուս խաչքարն (1,34 մ X 0,68 մ) ագուցված է արեւմտյան մուտքի աջ կողմում: Արձանագրությունը փորագրված է խաչքարի քիվին եւ խաչի ստորին մասում.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ [Է]
ՇՐՎԱՆԻՆ.ԱՄՐԻՄԼԻՆ
ԹՎ... :ՌԻԷ:
(1578) ՊԷԼՈՒ

(նկ. 3)

«Ամրիս» անձնանվան առաջին տառի վերին հորիզոնական ստեղնը եղծված է, որի հետեւանքով հնարավոր է, որ փորագրված լինի «Արիս»: Մենք հակված ենք «Ամրիս» տարբերակին՝ Ա եւ Մ տառերն ընդունելով որպես կցագիր: Հր. Աճառյանը հիշատակում է «Ամրամ» եւ «Ամրում» արական անձնանունները, որ նշանակում են «իշխան»[11]: Դժվար է ընթերցվում նաեւ քարգործ վարպետի անունը՝ փորագրված խաչի ստորին մասում: Այն խիստ վերապահումներով կարդում ենք Պելու: Ս. Բարխուդարյանն այս դարաշրջանում Պելու քարգործ չի հիշատակում, ուստի հիշյալ անձնանունը դեռ լուսաբանման կարիք ունի:

Մյուս խաչքարը (1,34 մ X 0,60 մ), որն ագուցված է եկեղեցու հյուսիսային մուտքի ձախ

10 Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, Միջնադարյան ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Եր., 1963, էջ 148: Տե՛ս նաեւ «Դիվան հայ վիմագրության», պրակ V, կազմող՝ **Ս. Գ. Բարխուդարյան**, Եր. 1982, էջ 271, արձ. 1055:
11 Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Եր., 1942, էջ 140:

կողմում՝ արտաքուստ, հայտնի քարգործ Մելիքսեթի աշխատանքներից մեկն է: ԺԶ դարում խաչքարերի քանդակային ձևավորման հիմնական մոտիվը դառնում է զարդաքանդակների գծերի նրբացումը, ապա բուսական տարրերի ոճավորման դեպի երկրաչափականին նմանվող ձևերը: Այս ուղղության ներկայացուցիչներից է Մելիքսեթ կազմողը. նրա ստորագրությամբ խաչքարեր ունենք Գավառի Կարմիր, Սարուխան գյուղերում, Նորադուզում, Սևանի Ծաղկունք գյուղում և այլն[12]: Մելիքսեթ կազմողի՝ Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցու վերոհիշյալ խաչքարով ընդլայնվում է նրա գործունեության աշխարհագրական շրջանակը: Արձանագրությունը փորագրված է հիմնախաչի խորանի վերին հատվածում, իսկ թվականը՝ գնդաձև վարդյակի անկյուններում.



ԿԱԶ[Մ]ՄՈՂ ՄԷԼ̲ԻՔ̲ՍԷԹԻՆ ՈՂՈՐՄԻ
ԹՎ̲ԻՆ̲ :ՌԽ: (1591)

(նկ. 4)

Հիշյալ խաչքարի թվականը փոքր-ինչ դժվար է ընթերցվում: Հստակ են «Թ» (թվին) և «Խ» (40) տառերը, իսկ «Ռ» (1000) վերականգնել ենք՝ (1040 + 551 = 1591) հաշվի առնելով նաև այն, որ Ս. Բարխուդարյանը Մելիքսեթ քարգործի գործունեությունն ըստ վիմագրերում պահպանված տվյալների սահմանում է 1541 - 1595 թվականները[13]:

Հյուսիսային դռան աջ կողմում, արտաքուստ, ագուցված է մեկ այլ խաչքար (1,34 մ X 0,70 մ), որի խաչի խորանի չորս անկյուններում միայն թվականն է.



ԹՎ̲ԻՆ̲ :ՌԽԵ: (1596)

(նկ. 5)

Խաչքարի քանդակագործական հարդարանքը թույլ է տալիս այս խաչքարը ևս վերագրել Մելիքսեթ քարգործին, մանավանդ, որ նախորդ խաչքարի հետ զարդամոտիվային լուծումների բազում ընդհանրություններ ունի:

Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցու որմերում ագուցված խաչքարեր կան ոչ միայն արտաքուստ, այլև ներքուստ: Դրանցից մեկը զետեղված է մկրտության ավազանի պատի մեջ, որն ունի Հայոց ՌՆԼԳ (1984) թվականը, իսկ մյուսը՝ Սուրբ Սեղանի առջևի մասում, որոնց կազմողն է Էդ. Հակոբջանյանը:

Մի մարմարյա փոքր խաչքար ևս (0,26 մ X 0,17 մ) ագուցված է մկրտության ավազանի ձախ կողմում: Հիմնախաչի հորիզոնական թևերի վերին մասում կան արևի և լուսնի

12 Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, նշվ. աշխ., էջ 155:
13 Տե՛ս անդ, էջ 380:

քանդակներ: Հայտնի է, որ լուսային նշանները խաչքարային հորինվածքում լայն տարածում են ունեցել դեռ ԺԳ դարից: Դրանք սովորաբար տեղադրվել են խաչի խորանի վերնամասում կամ թիվի վրա: Արեւը, որ տեղադրվում էր խաչի աջ, իսկ լուսինը՝ ձախ կողմում, կապվում էին Խաչելության ու Երկրորդ գալուստի հետ[14]:

Խաչի ստորին մասում փորագրված է արձանագրություն, 3 տողից.

Յ[Ի]Շ[ԱՏԱԿ] Է ԽԱՉՍ
ՄԲ ՆՇԱՆ ԷԼԻՋ/ՊԱՐԻՆ
ՊԱՊՈՒՆԱԻՆ ԹԻՆԱ/ԹԻՆ
ԱՆԱԻՆ

(նկ. 8)

Արձանագրությունը լավ է պահպանվել, այն թվագրված չէ, սակայն, հարազատ է ԺԷ - ԺԸ դարերին: Վիմագրում հիշատակված են անուններ՝ Էլիզպար, Պապունա, Թինաթ, Անա, որոնց հիշատակին էլ ձոնված է խաչքարը: Անձնանուններից դատելով՝ վիմագրում հիշվածները պետք է լինեն վրացահայեր: Հր. Աճառյանը վերոնշյալ անձնանունների գործածությանը հանդիպում է ԺՁ - ԺԷ դարերի ձեռագրերում: Օրինակ, «Անա» իգական անձնանվան վերաբերյալ նշում է, որ այն հանդես է գալիս թուրքերեն xatun, չաղաթ, bike «փիկին» բառի հարադրությամբ[15]: Պապունա անվան նմանությամբ հիշատակում է Պապանուն արական անձնանունը, որ կազմված է պապ + անուն բառերից, իբրեւ թե երեխան կոչվել է պապի անունով[16], իսկ «Թինաթ» իգական անձնանունը կապելով վրացերեն Թինաթին անվան հետ, տալիս է բառիս բացատրությունը՝ «լույսի ցոլացում», որ համազոր է մեր Շողակաթ անվան[17]:

Ս. Աստվածածին եկեղեցու աջ ավանդատան հատակին դրված է (0,70 մ X 0,35 մ) մի շինաքար, վրան արձանագրություն, 5 տողից: Արձանագրությունը տեղ-տեղ եղծված է եւ դժվարությամբ է ընթերցվում.



ՄՈՒ[ՐԱ] ՏՈ Ծ[Ց][Շ]Ի/[Ն]ԵՑԱՒ
ՏՈՒՆՍ ԱՅՍ ՊԱ Տ/ ԱՆԻ
ՍԱՐԳՍԻ ԲԱՂԴԱՍԱՐ/ ՆՀ ՄԷԼԻՔ
ՍԼԱՐԳՍԵԼԱԻՑ ՄԵ ԳՐԹԼԱԻԼՈՅՑ
ԱՄԻ 1819 ԱՊՐԼԻՅԼԻ

(նկ. 9)

Ամենայն հավանականությամբ արձանագրությունը Մուրատի կողմից ինչ-որ վարժարանի (կրթանոցի) կառուցման վկայագիր է, ուր հիշատակված են նաեւ ոմն Սարգիս Բաղդասարյան եւ Մելիք Սարգսյանց: Ինչպես վերը նշեցինք, ըստ Ալիշանի մեկ դար հետո, փայտաշեն եկեղեցին փոխարինվում է քարակերտ կառույցով, նաեւ «հատատեցաւ եւ

14 Տե՛ս, **Ն. Լ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 271:
15 Տե՛ս **Ն. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 145:
16 Տե՛ս **Ն. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Եր., 1948, էջ 224:
17 Տե՛ս **Ն. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Եր., 1944, էջ 310:

վարժարան առ նմին՝ արդեամբք Յովհաննու Շամքոռեանց»[18]: Հայտնի է, որ փայտաշեն եկեղեցին կառուցվել էր 1767 թ. եւ մեկ դար հետո, այսինքն՝ մոտ 1860 - ական թվականներին կառուցվել է քարակերտ շինությունը: Վարժարանը, որն ըստ արձանագրության կառուցվել է 1819 թ., գտնվելով անմիջապես վիճակում հավանաբար վերաշինվել է 1860 - ական թվականների շինարարական աշխատանքների ժամանակ: Ալիշանի տեղեկությունը («հասպարեցաւ եւ վարժարան»), ըստ էության վերաբերում է հնի տեղում նորը կառուցելուն, որն իրագործվել է Հովհաննես Շամքորյանցի բարերարությամբ: Տեղացիները եւս հավաստում են, որ եկեղեցու հարավային պատին զուգահեռ կառուցված է եղել մի շինություն, որը սկզբում եղել է վարժարան, իսկ վերջին շրջանում այդտեղ բնակվել են: 1980 - ականներին եկեղեցում եւ նրա դարձաքում տարվող նորոգման եւ բարեկարգման աշխատանքների ժամանակ էլ գտնվել է վերոնշյալ քարը, որի արձանագրությունն ուղղակիորեն կապվում է վերը ասվածին: Այսինքն, վիմագրում հիշատակված «կրթանոցը» երբեմնի վարժարանն է, որի վկայագիրն է հիշյալ արձանագրությունը: Արձանագրության չորրորդ տողում «ՄԵԼԻՔ» - ից առաջ փորագրված «Ղ» տառը համարում ենք գրչի սխալ եւ հավանական համարում «Ց», որով ամբողջանում է Սարգսի ազգանունը, այն է՝ «ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑ», ինչպես, օրինակ «ՄԵԼԻՔ ՍԱՐԳՍԵԱՆՑ»:

Ս. Աստվածածին եկեղեցու բակի հյուսիսային կողմում դրված է կոտրված մի շինաքար, որի վիմագրում հիշատակված է ոմն վաղարշապատցի Վարդան.



⌈ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ ՎԱՐԴԱՆ

(նկ. 10)

Կա եւս մի քար՝ գտնված մաքրման աշխատանքների ժամանակ, ուր քանդակված է խաչ, որի ուղղահայաց թեւերի ստորին աջ եւ ձախ կողմերում փորագրված է.

1 2 (նկ. 11)

Եկեղեցու բակի արեւելյան կողմում կան զույգ տապանաքարեր, որոնց արձանագրություններում հիշատակված են Հարություն եւ Թելլու Մարգարյան ամուսինները: Վիմագիր բանաստեղծության ձեւով են փորագրված տապանագրերը, որոնք հարկ են համարում մեջբերել.

Կեանքը վաղանցուկ, աշխարհն ունայն, Սիրտը զգայուն, վիշտը բիւրաւոր,
բարիքը միայն մնայ յաւիտեան: Բարին մնայուն, կյանքը անցաւոր:
Թելլու Մարգարեան Յարութիւն Մարգարեան
1854 - 1912 1840 -

Վերջինիս մահվան թվականը փորագրված չէ:

18 **Ղ. Ալիշան**, Այրարատ, 1890, էջ 209: Տե՛ս նաեւ **Ն. Տէր-Միքայէլեան**, նշվ. աշխ., էջ 4:

Նկ. 1. Ս. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունը

Նկ. 2 Խաչքար՝ ագռաղված եկեղեցու արևմտյան պատի ձախ կողմում

Նկ. 3 Խաչքար՝ ագռաղված եկեղեցու արևմտյան պատի աջ կողմում

Նկ. 4 Խաչքար՝ ագռաղված եկեղեցու հյուսիսային մուտքի ձախ կողմում

Նկ. 5 Խաչքար՝ ագռաղված եկեղեցու հյուսիսային մուտքի աջ կողմում

Նկ. 6, 7 Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին ագռաղված խաչքարեր

Նկ. 8 Մարմարյա խաչքար ավերված
ճեղքերով ամփոփված Ծաղիկ կամարում

Նկ. 9 Գրեթե անընթեռնելի գրվագներ
Մեկնեղեռ սալ սանձատեղումից

Նկ. 10 Գրեթե անընթեռնելի գրվագներ Մեկնեղեռ
բանկի հյուսիսային պատի ներսում

Նկ. 11 Խաչաձևանման քար Մեկնեղեռ բանկում

Նկ. 12 Ս. Աստվածածին Մեկնեղեռ
տանգամանքներում և ուղղակիորեն մուտքը

Տեղագիրների մոտ (Հովհաննես եպիս. Շահխաթունյանց, Աբել արք. Մխիթարյանց, Ղեւոնդ Ալիշան եւ այլք), ինչպես նաեւ պատմագիտական գրականության էջերում, ի տարբերություն Վաղարշապատի մյուս վանքերի (Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ), Ս. Աստվածածին եկեղեցու վերաբերյալ տեղեկությունները խիստ կցկտուր են: Դա է պատճառը, որ այսօր մեզ անհայտ են եկեղեցում պաշտոնավարած քահանաների անունները: Հայտնի են միայն Ի դարի երկրորդ կեսից գործած ստորեւ հիշատակվող քահանաները.

Տեր Քերովբե Ավագ Քահանա Շահբազյան (1949 - 1969)

Տեր Հովսեփ Քահանա Հակոբյան (1978 - 1995)

Տեր Գեղամ Քահանա Քեսաբլյան (1995 - 2001)

Տեր Եղիշե Ավագ Քահանա Բաղրամյան (2001 - 2003)

Տեր Մկրտիչ Քահանա Մուշաղյան (2003 - առ այսօր)

Չնայած պատմական սուղ տեղեկություններին, հայտնի է, որ Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում է Կոմիտասն իր վարդապետական աստիճանն ու գավազանն ստացել: Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկի կոնդակի համաձայն, կաթողիկոսական տեղապահ Մեսրոպ արքեպիսկոպոսը 1895 թվականի փետրվարի 26-ին, Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում, առավոտյան ժամերգությունից հետո, վարդապետության աստիճան ու գավազան է շնորհում Կարապետ, Բենիկ, Կոմիտաս, Եզնիկ եւ Թադեւոս աբեղաներին[19]:

Սույն համառոտ աշխատանքը մի փորձ է՝ ուսումնասիրության ենթարկելու ուշ միջնադարում կառուցված եռանավ բազիլիկներից մեկի՝ Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու պատմությունն ու նրա վիմական արձանագրությունները: Վերջիններիս միջոցով լուսաբանվում են Վաղարշապատի՝ ուշ միջնադարում կատարվող մի շարք իրադարձություններ, ինչպես նաեւ դրանք որոշակի հող են նախապատրաստում՝ գաղափար կազմելու այս տարածաշրջանի խաչքարային արվեստի ու քարգործ վարպետների աշխատանքների վերաբերյալ:

19 Տե՛ս «Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչէն», աշխատասիրութիւն Աբէլ վրդ. Օղլուգեանի, Մոնթրէալ, 1994, էջ 43: